



Ծրագիրը
ֆինանսավորվում է
Եվրոպական միության
կողմից



Ծրագիրն իրականացվում է Բաց
հասարակության հիմնադրամներ –
Հայաստանի կողմից



Ծրագիրն իրականացվում է
Հանրային քաղաքականության
ինստիտուտի հետ համատեղ



UNION OF INFORMED
CITIZENS

Ծրագիրն իրականացվում է Իրազեկ
քաղաքացիների միավորում ՀԿ-ի
հետ համատեղ

Դրական փոփոխություն քաղաքացիական հասարակության հզորացման միջոցով

Քաղաքացիական ակտիվիստների դպրոցի մասնակցության հրավեր

Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող Դրական փոփոխություն քաղաքացիական հասարակության հզորացման միջոցով՝ ծրագրի շրջանակներում «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն քաղաքացիական ակտիվիստներին հրավիրում է մասնակցելու մարդու իրավունքների, քրեական արդարադատության և սոցիալական արդարության ոլորտներում մշտադիտարկման և ջատագովության գիտելիքների ձեռքբերման և կարողությունների զարգացման 2-օրյա դպրոցի: Ծրագիրն իրականացվում է Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան կազմակերպության և «Հանրային քաղաքականության ինստիտուտ» ՀԿ-ի հետ համատեղ:

Դասընթաց

Դասընթացը ծրագրի՝ կարողությունների զարգացմանն ուղղված հատվածի բաղադրիչն է: Դասընթացի նպատակն է երիտասարդ ակտիվիստներին ապահովել բավարար գիտելիքով և հմտություններով, որպեսզի վերջիններս իմաստալից մասնակցություն ունենան ՔՀԿ-ների մշտադիտարկման և ջատագովության նախաձեռնություններին և համագործակցեն դրանց հետ իշխանությունների քաղաքականության նկատմամբ հսկողություն իրականացնելու ջանքերում:

Դասընթացը կանդրադառնա հետևյալ խնդիրներին՝

- Ի՞նչ խնդիրների հետ գործ ունեն ՀԿ-ները մարդու իրավունքների, քրեական և սոցիալական հավասարության ոլորտներում, և ինչո՞ւ են դրանք կարևոր
- Ի՞նչ դեր ունեն մշտադիտարկումը և ջատագովությունը բարեփոխումների խթանման հարցում
- Ինչպե՞ս իրականացնել իրազեկության բարձրացման արշավներ մշտադիտարկման արդյունքների հիման վրա:

Դասընթացը մասնավորապես կանդրադառնա հետևյալ խնդիրներին՝

- Խտրականություն
- Ընտանեկան բռնություն
- Խոշտանգումներից պաշտպանված լինելու իրավունք
- Արդար դատաքննության իրավունք
- Որակյալ կրթության մատչելիություն
- Առողջապահական ծառայությունների մատչելիություն
- Ընտրություններ

Դասընթացի մասնակիցները կծանոթանան ծրագրի թիրախային ոլորտներում գործող կազմակերպությունների հետ, ովքեր իրականացնում են մշտադիտարկման և ջատագովության գործողություններ:

Դպրոցում դասախոսություններով հանդես կգան ոլորտի առաջատար մասնագետներ:

Միջոցառումը տեղի կունենա Ադվերանում երկու փուլով՝ մարտի 16-17-ին և մարտի 23-24-ին: Կազմակերպիչները կհոգան մասնակիցների ճանապարհածախսի, գիշերակացի և սննդի հետ կապված ծախսերը:

Սովորել՝ անելով

Ծրագիրը կարողությունների զարգացումը զուգակցում է ենթադրամաշնորհների տրամադրման հետ, որը կօգնի քաղաքացիական ակտիվիստներին փորձարկել և ամրագրել ստացված գիտելիքները:

Դպրոցը հաջողությամբ ավարտած քաղաքացիական ակտիվիստները հնարավորություն կունենան դիմելու ենթադրամաշնորհների նշված թեմաներից մեկում իրազեկման բարձրացման արշավներ իրականացնելու համար:

«Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն կտրամադրի մինչև 3000 եվրո կազմող 8 դրամաշնորհներ: «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն կաջակցի դրամաշնորհառուներին ծրագրերի իրականացման ողջ ընթացքում՝ տրամադրելով խորհրդակցություններ թե՛ դրամաշնորհի կառավարման, թե՛ իրականացման մեթոդաբանության վերաբերյալ:

Ո՞վ կարող է դիմել

Դպրոցի մասնակիցները կընտրվեն լրացված հայտերի գնահատման արդյունքում: Մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել առցանց [դիմում-հայտը](#) մինչև **2019թ. մարտի 14-ը**:

Դիմել ցանկացող քաղաքացիական ակտիվիստները պետք է ցուցադրեն իրենց մասնակցությունը հասարակական կյանքում՝ որպես որևէ կազմակերպության անդամ կամ անհատ: Նրանք պետք է ցուցաբերեն հետաքրքրություն և ունենան բավարար գիտելիքներ ծրագրի թիրախ հանդիսացող 7 թեմաներից առնվազն մեկի վերաբերյալ: Նախապատվությունը կտրվի երիտասարդ ակտիվիստներին: Մասնակցությունը Հայաստանի մարզերից խրախուսվում է:

«Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն կանցկացնի տեղեկատվական հանդիպում Երևանում և մարզերում գտնվող տարբեր երիտասարդական կազմակերպություններում՝ ակտիվ երիտասարդներին իրազեկելու և խրախուսելու դիմել այս նախաձեռնությանը:

Ընտրությունը կկատարվի ծրագիրն իրականացնող երեք կազմակերպությունների կողմից: Դասընթացին մասնակցելու համար ընտրված դիմորդները կտեղեկացվեն մինչև մարտի 14-ը: Հարցերի համար խնդրում ենք զանգահարել «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ գրասենյակ 011 355042 հեռախոսահամարով, կամ գրել uicarmenia@gmail.com էլ-փոստի հասցեին: